



Ա	Ր	Ա	Գ	Ի	Լ	Տ	Հ	Հ	Ա
Շ	Ո	Խ	Ո	Ո	Գ	Ա	Ա	Ք	Վ
Ն	Գ	Թ	Լ	Ա	Ո	Ո	Ռ	Ա	Ա
Ա	Ր	Ա	Թ	Ն	Չ	Ա	Ա	Ջ	Մ
Ն	Ի	Մ	Ա	Ո	Ծ	Ն	Չ	Ն	Ա
Ե	Չ	Ա	Ն	Յ	Ր	Ա	Ա	Ա	Ր
Ր	Յ	Ր	Հ	Շ	Փ	Գ	Ն	Ջ	Օ
Գ	Ի	Ք	Ո	Ր	Ը	Ի	Ք	Ա	Ն
Ը	Լ	Ս	Ա	Տ	Ք	Ր	Փ	Ր	Դ
Ս	Ո	Լ	Տ	Ա	Ս	Ա	Ն	Ը	Ը

Արագիլ-Աշնան երգը-Գրիչ-Ախթամար-Սուտասանը-Տապանագիր-Անոյշ-Քաջ Նազար-Գութան-Գիքորը-Մարօն-Հառաչանք

Պահուած բառը Թումանեանի առաջին բանաստեղծութիւնն է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂԷՏԱ ԼԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

7 Դեկտեմբեր 1988-ը ժողովուրդի իրերայաջորդ սերունդները պիտի յիշեն իբրև սեւ օր մը: Սոյն թուականին մայր հայրենիքի եւ սփիւռքեան գաղութներու համայն հայութիւնը խոր յուզումի մատնուեցան, երբ ահաւոր երկրաշարժը աւերեց Հայաստանի մէջ գտնուող կարգ մը քաղաքներ: Աղէտը պատահեցաւ այն պահուն, երբ 1988 տարին լրումին կը մօտենար, առանց բերելու լուծում մը Արցախեան Պահանջատիրութեան: Տասնեակ հազարաւոր հայ գաղթականներ ողողածէին Հայաստանը յոյս տալով ազերիներու ոճրային ծրագիրներէն: Հանրային կարծիքին ուշադրութիւնը անմիջապէս շեղեցաւ ազերիներու կողմէ կազմակերպուած հայերու բռնագաղթէն:



7 Դեկտեմբերի երկրաշարժը աննախընթաց էր այն իմաստով, որ տեղի ունեցաւ խիտ բնակչութեամբ շրջաններու մէջ եւ պատճառեց առաւելագոյն թիւով մարդկային վնասներ: Հայաստանը հարուածող երկրաշարժը ունէր 10.7 աստիճանի մերքալի ուժգնութիւն, որ վնասեց հետեւեալ քաղաքները.
 -Սպիտակ, որուն բնակչութիւնը կը հասնէր մօտ 50 հազարի: Սպիտակը քանդուած է 90 առ հարիւր համեմատութեամբ:
 -Լենինական, որուն բնակչութիւնը կը հասնէր մօտ 220 հազարի: Այս քաղաքը քանդուած է 60 առ հարիւր համեմատութեամբ:
 -Ինչպէս նաեւ Կիրովականը եւ ուրիշ շրջաններ: Երկրաշարժը ցնցած էր նաեւ Երեւանէն մաս մը , որուն գոհ գացին մօտ 10 հազար ուսանողներ: Ահաւասիկ, այսպիսի ծանոթակշիռ պայմաններու մէջ, հայ ժողովուրդը հայրենիք թէ սփիւռք, զօրաշարժի ենթարկեց իր բոլոր ուժերը, մարդկային եւ նիւթական վնասներ պատճառած այս աղէտը համազգային ճիգերով դիմագրաւելու համար:
 Հայրենի ժողովուրդը, որ նոյն ժամանակ հաստատ յանձնառութեամբ կը մղէր Արցախեան պահանջատիրական պայքարը, երկրաշարժին առթած աւերին եւ քանդումի ահաւոր մթնոլորտին մէջ, ինքզինք դրած է կրկնակի տագնապները դիմագրաւելու վճռակամութեան առջեւ: Միջազգային ընտանիքը չթերացաւ Հայաստանի աղետեալներուն օգնութեան փութալու իր ճիգերուն մէջ: Այս պայմաններուն մէջ արտակարգ փոյթով, բազմաթիւ երկիրներէ նպաստներ առաքուեցաւ Հայաստան:

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԻԿԻՆ ՏԱՍՆԱԲԱՆԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը կը դառնա «Առողջ միտքը, առողջ մարմնի մեջ» մարզական միջազգային կարգախօսը, միաժամանակ ան ոչ-Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկէն կը զատորոշուի իր ազգային յատուկ նկարագիրով եւ Հայաստանին ու հայութեան հանդէպ իր նուիրական պարտաւորութեամբ:

Եթէ երբեք այլ մարզիկներու նման մրցումները միայն մարզական ելոյթներէն, յաղթանակով կամ պարտութեամբ վերջացող, Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկի պարագային, այդ մրցումները հայ ժողովուրդի պայքարելու ոգիին ու կամքին արտայայտութիւններն են: Արդ, Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը.-

1. Հաւատարիմ է Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացի՛ր- բարձրացուր» նշանաբանին: Ան պատրաստ է անսակարկ եւ հաւատարմօրէն ծառայելու ազգին ու հայրենիքին:

2. Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը մաքուր է նկարագիրով, մտքով եւ բարոյականով:

3. Դաշտերէններ պէտք ուրա, կարգապահութեամբ պար է:

4. Անգուսպ է իր արտայայտութիւններուն կամ շարժումներուն մէջ եւ նախանձախնդիր է իր պատկանած միութեան բարոյականին:

5. Ան կը յարգէ իր պատասխանատուն կամ մարզիչը, կ'ենթարկուի անոր բոլոր ցուցմունքներուն՝ առանց այլ եւ այլի:

6. Մրցումներուն կը մասնակցի յաղթելու վճռակամութեամբ: Ան երբեք տկարութիւն չի ճանչնար:

7. Ան կը հաւատայ, որ մաս կը կազմէ հաւաքականութեան մը, մեծ ընտանիքի մը, որ իր կարգին կը հաւատայ հաւաքական աշխատանքի եւ համագործակցութեան սկզբունքին:

8. Յաղթանակներն ու պարտութիւնները կ'ընդունի մարզական նոյն ոգիով, վեհանձնութեամբ եւ համեստութեամբ:

9. Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկին ֆիզիքականը որքան կը պատկանի իրեն՝ նոյնքան կը պատկանի իր միութեան: Ան կը գուրգուրայ իր ֆիզիքական առողջութեան եւ մաքրութեան՝ հեռու քանդիչ մոլութիւններէ:

10. Ան կը հաւատայ Հայաստանին եւ Հայ Դատին ու միշտ պարտաստ է զինուորագրուելու եւ ծառայելու Հայաստանին եւ հայ ժողովուրդին:

«ՄԱՆԿԱԿԱՆ ԵՒՐԱՏԵՍԻԼ 2019»

ԵՐԳԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՅԹԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՆՆԵՐՈՐԴՆ Է.

ՅԱՂԹԵՑ ԼԵՀԱՍՏԱՆԸ



«Մանկական Եւրատեսիլ 2019»

Երգի հեղինակաւոր միջազգային մրցոյթին, որ 24 Նոյեմբերին Լեհաստանի Գլիիցե քաղաքին մէջ տեղի ունեցաւ, յաղթեց Լեհաստանը ներկայացնող երգչուհի Վիքի Գաբորը «Superhero» երգով:

Հայաստանի պատուիրակ 13-ամեայ Քարինա Իգնատեան, որ կատարեց «Colours Of Your Dream» երգը, դատական կազմի եւ առցանց քուէարկութեան արդիւնքով իններորդ դիրքը գրաւեց:

Ժիւրիի քուէարկութեան համաձայն Հայաստանը 8 միաւոր ստացաւ Աւստրիալիայէն, 5-ական միաւոր՝ Ֆրանսայէն եւ Ղազախստանէն, 10-ը Ռուսիայէն, 6-ական միաւոր՝ Հիւսիսային Մաքեդոնիայէն եւ Ալպանիայէն, 7-ական միաւոր՝ Իսպանիայէն եւ Վրաստանէն, 3-ական միաւոր Պելառուսէն եւ Լեհաստանէն, 2 ձայն՝ Մալթայէն, 4-ական միաւոր՝ Ուքրանիայէն ու Փորթուկալէն:

Մեր երկիրը իր 12 միաւորը տուաւ Հոլլանտային:

Հեռուստադիտողի քուէարկութեամբ Քարինա Իգնատեան 115 միաւոր վաստակեց:

Քարինան «Մանկական Եւրատեսիլ» երգի մրցոյթին Հայաստանը ներկայացնող 14-րդ մասնակիցն է: